


ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ



Դասը վարող ուսուցիչներ՝
Միրանուշ Ֆախուրյան՝ Արարատի մարզի Նարեկի մ/դ
Հայկուշ Եղիազարյան՝ Սյունիքի մարզի Վաղատինի մ/դ, Հացավանի մ/դ



Թեման՝ «Եղանակ և կլիմա» Թեմայի ամփոփում

7-րդ դասարան





Նպատակ՝

1. Ձևավորել «Եղանակի տեսության» հավելվածը վերլուծելու կարողություն
2. Չարգացնել մեդիա տեղեկատվությունը քննադատորեն վերլուծելու կարողություն
3. Չարգացնել համագործակցային աշխատանքներ իրականացնելու հմտություն



Վերջնարդյունքը՝

- **Կազմի** և **լուծի** խնդիրներ, **կատարի** կանխատեսումներ և **առաջարկի** լուծումների հնարավոր տարբերակներ:
- **Համեմատի ու տարբերակի** հարթավայրային Արտաշատի և նախալեռնային Սիսիանի եղանակային բնութագրիչները և կատարի վերլուծություններ:
- **Արժևորի ու գնահատի** մեդիայի հավաստիությունը և անհրաժեշտությունն իր կյանքում:
- **ՀՊԶ վերջնարդյունքները**
Հ1, Հ2, Հ5, Հ6, Հ7, Հ8, Հ9, Հ10, Հ12, Հ27, Հ28-32, Հ51



Խնդիրները՝

- Ըստ հավելվածի կազմել օրվա ջերմաստիճանային գրաֆիկը, հաշվել օրվա միջին ջերմաստիճանը նշել ամենացածր և ամենաբարձր ջերմաստիճանները, որոշել օրվա ամպլիտուդը, համացանցից գտնել ցերեկվա տևողությունը:
- Ըստ հավելվածի որոշել քամու արագությունը և ուղղությունը կազմել «Քամիների վարդը»
- Օդի հարաբերական խոնավության ցուցանիշի հիման վրա որոշել օդի բացարձակ խոնավությունը և կանխատեսել մթնոլորտային տեղումների հավանականությունը:
- Ըստ հավելվածի տվյալների կատարել Արտաշատ և Միսիան քաղաքների եղանակային պայմանների համեմատություն:



Խաչվող հասկացություններ՝

Օրինաչափություն, Պատճառ հետևանք, Էներգիա և նյութ, Մասշտաբ, սանդղակ, համամասնություն և քանակ, Կայունություն և փոփոխություն, Համակարգ և մոդել

Կարողունակություններ՝

Լեզվական, Սովորել սովորելու, Թվային և մեդիա, Մաթեմատիկական և գիտատեխանիկական, Տնտեսական

Միջառարկայական կապեր՝

Հայոց լեզու, Գրականություն, Բնություն, Մաթեմատիկա, ԹԳՀԳ,



Դասի ընթացքը

Քայլ 1.

Տնային աշխատանքի ստուգում

Դասարանը նախապես բաժանվել է 2 խմբի և ստացել առաջադրանք.


Առաջին խումբ՝ Արտաշատ

Երկրորդ խումբ՝ Սիսիան

▪ Խմբերը թեմատիկ քարտեզների օգնությամբ ներկայացնում են Արտաշատի և Սիսիանի բացարձակ բարձրությունները, օդի ջերմաստիճանի և մթնոլորտային տեղումների բնութագիրը, կլիմայի տիպերը :



Արտաշատ 06.12.2023



Միսիան 06.12.2023



Քայլ 3. Բացատրման փուլ: Եղանակի ուսումնասիրության չափիչ սարքեր և գործիքներ




ջերմաչափ



խոնավաչափ



հողմացույց



Մտփկային և աներօդի ճնշաչափեր



Քայլ 4

Առաջին խումբ

▪ Ըստ հավելվածի կազմել օրվա ջերմաստիճանային գրաֆիկը, հաշվել օրվա միջին ջերմաստիճանը նշել ամենացածր և ամենաբարձր ջերմաստիճանները, որոշել օրվա ամպլիտուդը, համացանցից գտնել ցերեկվա տևողությունը:

Երկրորդ խումբ

▪ Ըստ հավելվածի որոշել քամու արագությունը և ուղղությունը կազմել «Քամիների վարդը»

Առաջին խումբ

▪ Ըստ հավելվածի տվյալների կատարել Արտաշատ և Սիսիան քաղաքների եղանակային պայմանների համեմատություն:

Երկրորդ խումբ

▪ Օդի հարաբերական խոնավության ցուցանիշի հիման վրա որոշել օդի բացարձակ խոնավությունը և կանխատեսել մթնոլորտային տեղումների հավանականությունը:



Քայլ 5

1. Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է հավելվածի համապատասխան հատվածի համար ներկայացված առաջադրանքները՝ ձևակերպելով տեսական նյութի խաչվող հասկացությունները:
2. Կազմում և լուծում են խնդիրներ, անդրադառնում չափիչ սարքերին:
3. Կատարում են երկու քաղաքների մեկօրյա եղանակային և կլիմայական տվյալների համեմատում:





Հանելուկներ եղանակին նվիրված

Սառեցրել է ճանապարհը,
Նախշագարդել պատուհանը,
Սպիտակ, սառը սավանով
Ծածկել է ողջ աշխարհը:



Հողի տակից ծիլ է ծլում,
Ծառի ճյուղից բողբոջ էլնում,
Արևն ուրախ տաքացնում է,
Ձմռան քնից արթնացնում է:

Երկար սպասված եղանակ,
Շատ ջերմ արև ու կրակ,
Դաշտում ծղրիղն է երգում,
Ասեք, այդ է ըբ է լինում:

Ես բերք-բարիք եմ բերում,
այգիներն եմ զարդարարում
Ու թռչուններին մրսկան
Հարավ եմ ճանապարհում:

Դարձվածքներ և ասացվածքներ



Ամռան փուլ՝ ձմեռվա նույն



Ամառը որ պատկես հովեր,
ձմեռը կսատկեն կովեր:

Գարնանը ինչ ցանես,
աշնանը կհնձես:

Մի ծաղկով գարուն չի գա:



Տնային առաջադրանք

Հաջորդ օրվա հավելվածի եղանակային տվյալները վերլուծել և տեղադրել համագործակցային Padlet պատին, որի հղումը ուսուցիչը փոխանցում է սովորողներին:





1. Աշխարհագրություն 7, «Աստղիկ գրատուն» ԵՐԵՎԱՆ-2023

Հեղինակներ՝ Թ. Վարդանյան , Ա. Պոտոսյան , Ասատրյան Վարդան , Հակոբյան Լուսինե

2. <https://hy.meteocast.net/forecast/am/artashat/>

3. <https://hy.meteocast.net/forecast/am/sisian/>

4. https://www.youtube.com/watch?v=pAE7si7sU_w

5. <https://www.youtube.com/watch?v=HQigu1XEdHk>

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

- ❑ Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում:

